



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Թ Ի Վ 8

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԵՈՐՀՐԴԻ՝
2021 Թ. ԱՊՐԻԼԻ 6-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ**

Օրակարգում՝

1. Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության ամբիոնի վարիչի թեկնածության քննարկման և քվեարկության հարցը:

2. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտական խորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ գիտխորհրդի 36 անդամներից նիստին մասնակցում է 33-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ընթերցեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն քվեարկությամբ:

Օրակարգի 1-ին հարցի առթիվ ֆակուլտետի գիտխորհրդի նախագահ, պրոֆ. Ա. Ավագյանը գիտխորհրդին տեղեկացրեց, որ, ըստ գործող կարգի, մամուլում և ԵՊՀ կայքում Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի վարիչի թափուր տեղի համար նախապես հայտարարված մրցույթին մասնակցելու համար դիմել էին ամբիոնի պրոֆեսոր, բ. գ. դ. Ալբերտ Մակարյանը և ամբիոնի դոցենտ, բ. գ. թ. Սերժ Սրապիոնյանը: ԵՊՀ մանդատային հանձնաժողովը երաշխավորել է միայն Ալ. Մակարյանին: Տեղի է ունեցել ամբիոնի նիստ, որտեղ քննարկվել է **Ալ. Մակարյանի թեկնածու-**

թյունը: Ամբիոնը դրականորեն է արտահայտվել նրա նկատմամբ: Բաց քվեարկությամբ պրոֆ. Ալ. Մակարյանը միաձայն երաշխավորվել է ֆակուլտետի գիտխորհրդում քվեարկվելու համար:

Ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ Բ. Գ. Պ., պրոֆ. **Ա. Աբաջյանը** գիտխորհրդին ներկայացրեց Ալ. Մակարյանի գործերը և հանձնաժողովի կարծիքը՝ նշելով, որ Ալ. Մակարյանը ներկայացրել է համապատասխան բոլոր փաստաթղթերը, և մրցութային հանձնաժողովը նրան միաձայն երաշխավորում է քվեարկվելու ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդում:

Պրոֆ. Ա. Աբաջյանը նշեց նաև, որ Ալ. Մակարյանը գիտական հեղինակություն է և սիրված դասախոս. շուրջ 40 տարի նվիրումով աշխատելով ամբիոնում, 20 տարի լինելով ֆակուլտետի գիտխորհրդի և 18 տարի ԵՊՀ-ում գործող՝ ԲՈԿ-ի բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի քարտուղարը՝ լավ է պատկերացնում ամբիոնի վարիչի պարտականություններն ու այդ պաշտոնին ներկայացվող արդի պահանջները, ունի հարուստ կենսավորձ, գիտական և մանկավարժական գործի հմուտ կազմակերպիչ է: 2016-ից մինչ այժմ Ալ. Մակարյանը տպագրել է 2 մենագրություն և ԲՈԿ-ի կողմից հաստատված ընդունելի ցանկում հրատարակված գիտական 15 հոդված, ընդ որում՝ մեկն անգլերենով (Լատվիա):

Ալ. Մակարյանի գիտական ղեկավարությամբ մինչ օրս թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանել 8 հայցորդ-ասպիրանտներ:

Նա հավաքել է որակավորման բարձրացման ծրագրում ընդգրկված անհրաժեշտ բոլոր կրեդիտները՝ ներառյալ օտար լեզուն:

Վերջին հինգ տարվա՝ նրան վերաբերող սոցիոլոգիական հարցման տվյալների միջին թվաբանականը կազմում է 4,9:

ԵՊՀ հոբելյանների առթիվ պարգևատրվել է ԵՊՀ Արծաթե և Ոսկե մեդալներով:

Իր ծրագրային ելույթում Ալ. Մակարյանը, շնորհակալություն հայտնելով դեկանին՝ պրոֆ. Ա. Ավագյանին, և ամբիոնի գործող վարիչ պրոֆ. Ս. Մուրադյանին՝ ֆակուլտետում ու ամբիոնում ծավալած գիտամանկավարժական գործունեության և ստեղծված բարոյահոգեբանական նպաստավոր մթնոլորտի համար, մանրամասնորեն և հանգամանալից

ներկայացրեց իր պատկերացումները ամբիոնի հետագա աշխատանքների մասին, որոնք պիտի ընթանան կազմակերպչական, կրթական, գիտական և մանկավարժական ուղղություններով: Ալ. Մակարյանը մասնավորապես ասաց հետևյալը.

Գիտխորհրդի հարգելի՛ նախագահ և անդամներ,

Ինձ համար հուզիչ պահ է, քանի որ հայտ եմ ներկայացրել՝ ստանձնելու պատասխանատու մի գործ: Այստեղ ներկաներից առնվազն 5 պրոֆեսոր ինձ ճանաչում է պատանեկան տարիքից, մեծ մասի հետ հասակ ենք առել միասին, մյուսներին դասավանդել եմ. ասել է թե՛՝ անցածս ուղու հիշեցումներն ավելորդ են:

Ամբիոնի՛՝ օրերս կայացած նիստի ժամանակ պրոֆ. Մուրադյանը նկատեց, որ ժամանակին, երբ հանձն առավ ղեկավարել ամբիոնը, ինքն ակադ. Թամրազյանից ավելի լավ ժառանգություն ստացավ, քան այժմ փոխանցում է: Ակնարկը հասկանալի է՝ ներկայիս տխուր իրավիճակը: Սա պրոֆ. Մուրադյանի հասկանալի ու խոր մտահոգությունն է, և իմ առաջիկա անելիքներից կարևորագույնը լինելու է հետևյալը. նախ՝ **գիտական** հարթությունը՝

1. պահպանել ամբիոնի լավագույն ավանդները, ազգային արժեքները, որոնք հայոց դասական գրականության ուսումնասիրության ու մատուցման գրավիչ եղանակներ, ապա նոր գնալ համաշխարհային գրական արժեքների անհրաժեշտ աղերսների և զուգորդումների.
2. այդ գրականության դասավանդումը շաղկապել ֆակուլտետում գործող մյուս ամբիոններին, նաև հումանիտար մյուս ֆակուլտետների.
3. գիտական աշխատանքներ կատարելիս ընդհանրապես հենվել խմբային ներուժի վրա, աշխատել, այսպես ասած, թիմով, որի արգասիքը կարող է լինել առաջիկա մեկ-երկու տարում ստեղծվելիք բուհական դասագիրքը՝ նախապես կազմված խելամիտ չափորոշիչներով ու սահմանված ծավալով:
4. խրախուսել երիտասարդ կադրերին, ավելին՝ պահանջել, որ նրանք կարճ ժամկետներում ավարտեն իրենց դոկտորական ատենախոսությունները, տարվա ընթացքում տպագրեն ուսումնասիրություններ և ամբիոնի պարբերաբար կազ-

մակերպվելիք կլոր սեղանների ընթացքում հանդես գան դրանց հիմնադրույթների գեկուցումներով.

5. թարմ հայացքով վերլուծել հայ դասական գրականությունը, շարունակաբար ընդգծել դրա վերժամանակյա ու համամարդկային բնույթը՝ կիրառելով հետազոտության նոր եղանակներ՝ խուսափելով, սակայն, ծայրահեղ նորարարությունից.
6. առանձնակի տեղ տալ գրականության տեսությանն ու բանահյուսական ակունքների քննությանը, առանց որոնց այսօր արդեն գրեթե անհնար է ստեղծել գիտական լուրջ արժեքներ.
7. համագործակցել հանրապետության բուհերի հայ գրականության մյուս ամբիոնների, գիտական կենտրոնների, հատկապես գրականության ինստիտուտի և գրողների միության հետ.
8. հայոց լեզվի ամբիոնների օրինակով ուշադիր հետևել Գիտության պետկոմի կողմից պարբերաբար հայտարարվող մրցույթներին և թիմերով մասնակցել դրանց. հաղթելու դեպքում մի կողմից կխթանվի գիտության զարգացումը, մյուս կողմից, ինչու չէ, մեկ-երկու տարվա կտրվածքով կապահովվեն հավելյալ վճարներ:

Այժմ **մանկավարժական** հարթությունը.

1. ամենից առաջ հետևել կարգապահությանը. ամբիոնը պետք է գրեթե ամենօրյա հսկողության տակ պահի իր կողմից մատուցվող առարկաների պատշաճ դասավանդումն ու դասախոսների և ուսանողների ներկայությունը.
2. անհրաժեշտ են պարբերաբար դասալսումներ, քննարկումներ, խորհուրդներ, որոնք անպայման կզգաստացնեն աշխատակիցներին և կնպաստեն փորձի փոխանակմանը.
3. ամբիոնը թե՛ բակալավրիատում, թե՛ հատկապես մագիստրատուրայում կարոտ է դասավանդվող հեղինակների, նրանց հատկացվող թեմաների ու ժամաքանակների և ծրագրերի թարմացման. պետք է անել հնարավորը՝ դասավանդվող առարկաները գրավիչ դարձնելու համար.

4. պետք է կարողանալ աշխատել ուսանողի հետ. հենց առաջին կուրսից սկսած՝ խրախուսել շնորհալիներին, ուղղորդել դեպի գրականագիտությունը, օգնել պատրաստել փոքրիկ ուսումնասիրություններ, իսկ լավագույնների գործերը միջնորդել տպագրության:

Երևի այսքանը. ընդհանրացնելով ասեմ, որ անհրաժեշտ են նորարարություն ու թարմություն՝ խուսափելով ծայրահեղություններից:

Շնորհակալություն:

Այնուհետև տրվեցին նրան ուղղված հարցեր, որոնց ամբիոնի վարիչի թեկնածուն պատասխանեց հստակ ու համոզիչ:

Ելույթ ունեցողները՝ **պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը, Ժ. Քալանթարյանը, Ս. Մուրադյանը, դոց. դոց. Վ. Պետրոսյանը, Ա. Ջրբաշյանը, Ս. Գրիգորյանը** և այլք, ասացին, որ Ալ. Մակարյանը երբեք չի եղել հավակնոտ. արդեն 20 տարի է, ինչ նա գիտությունների դոկտոր է, պրոֆեսոր, սակայն երբեք չի հավակնել պաշտոնների: Նրանք իրենց գոհունակությունը հայտնեցին ամբիոնի վարիչի թեկնածուի ծրագրային ելույթի առիթով և վստահություն, որ Ալ. Մակարյանը պաշտոնավարման ընթացքում կիրականացնի իր ծրագրերը:

Փակ-գաղտնի քվեարկություն անցկացնելու համար ընտրվեց ձայներ հաշվող հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝

1. Դիլբարյան Նարինե
2. Պետրոսյան Վարդան
3. Հովակիմյան Հովհաննես

Հաշվիչ հանձնաժողովը նախագահ ընտրեց դոց. Ն. Դիլբարյանին:

Փակ-գաղտնի քվեարկությունից հետո ձայներ հաշվող հանձնաժողովի նախագահը հրապարակեց արդյունքները.

Խորհրդի 36 անդամներից նիստին ներկա են եղել 33-ը, և քվեարկությանը մասնակցել են 33-ը:

Բաժանվել է 33 քվեաթերթիկ:

Քվեատուփում հայտնվել է 33 քվեաթերթիկ:

Քվեարկության արդյունքներն են՝ **կողմ – 31, դեմ – 1, անվավեր – 1:**

Գիտխորհրդի անդամները բաց քվեարկությամբ հաստատեցին հրապարակված արդյունքները:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն. - 1. Հաշվի առնելով փակ-գաղտնի քվեարկության արդյունքները՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ալբերտ Արշավիրի Մակարյանին** ընտրված համարել ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի վարիչի պաշտոնում:

2. Միջնորդել համալսարանի գիտական խորհրդի առջև՝ հաստատելու հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը: Գործող կարգի համաձայն խնդրել ռեկտորին նրա հետ կնքելու աշխատանքային պայմանագիր:

ԸՆԹԱՑԻՎ ՀԱՐՑԵՐՈՒՄ՝

Լ Ս Ե Ց Ի Ն – Հայ բանասիրության ֆակուլտետի՝ ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Սամվել Պարզևի Մուրադյանին** ԵՊՀ ամբիոնի պատվավոր վարիչի կոչում շնորհելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Վ. Գաբրիելյանը, Ա. Աբաջյանը, Ալ. Մակարյանը, Ժ. Քալանթարյանը, Վ. Սաֆարյանը, դոց. դոց. Վ. Եղիազարյանը, Վ. Պետրոսյանը, Ա. Գալստյանը և ուրիշներ:

Ելույթ ունեցողները բարձր գնահատեցին ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի վարիչ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, Բ. Գ. դ., պրոֆ. Սամվել Մուրադյանի երկարամյա արդյունավետ գործունեությունը մայր բուհում, մասնավորապես նշեցին, որ նա հանրապետության հեղինակավոր և վաստակաշատ մտավորականներից է, նշանավոր գրականագետ, բարեխիղճ ղեկավար և սիրված դասախոս: Նրա գրչին են պատկանում արժեքավոր բազմաթիվ մենագրություններ, ավելի քան 120 գիտական հոդվածներ ու լրջմիտ ուսումնասիրություններ, մեթոդական աշխատանքներ:

Պրոֆ. Ս. Մուրադյանը 20 տարուց ավելի մեծ հոգածությամբ ղեկավարել է հայ բանասիրության ֆակուլտետի՝ իրեն վստահված մայր ամբիոններից մեկը, պատրաստել երիտասարդ բազմաթիվ կադրեր, ղեկավարել տասնյակ ատենախոսություններ՝ շարունակելով իր երևելի նախորդների՝ ակադ.ակադ. Արսեն Տերտերյանի, Մկրտիչ Մկրյանի և Հրանտ Թամրազյանի լավագույն գիտական ավանդները՝ միշտ շեշտադրելով հայոց ազգային գրականության վերժամանակյա բնույթն ու արժեքները:

Նկատի ունենալով պրոֆ. Ս. Մուրադյանի գիտական և մանկավարժական վաստակը՝ ելույթ ունեցողները հանդես եկան միջնորդությամբ՝ Ս. Մուրադյանի դասախոսական աշխատանքը զուգորդելու համար ամբիոնում որպես պատվավոր պրոֆեսորի:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն. - 1. Հաշվի առնելով քվեարկության արդյունքները՝ ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի պրոֆեսոր, բանասիրական գիտությունների դոկտոր **Սամվել Պարզևի Մուրադյանին** ներկայացնել ԵՊՀ ամբիոնի պատվավոր վարիչի կոչման:

2. Միջնորդել համալսարանի ռեկտորատին՝ հաստատելու հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն առաջարկը:

ԼՍԵՑԻՆ – Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի դոցենտ, բ. գ. թ. **Նվարդ Խաչատուրի Վարդանյանին** բանահյուսություն մասնագիտությամբ ասպիրանտ և հայցորդ ղեկավարելու թույլվություն տալու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ. պրոֆ. Ս. Մուրադյանը, Ալ. Մակարյանը, Վ. Սաֆարյանը, դոց. դոց. Վ. Եղիազարյանը, Ռ. Էլոյանը և Հ. Համբարձումյանը:

Նշվեց, որ բ. գ. թ., դոցենտ Նվարդ Վարդանյանը 2006-ից աշխատում է հայ գրականության պատմության ամբիոնում: Ուսանողները գոհ են նրա դասախոսական աշխատանքից, և սոցիալաբնույթի գնահատականը 4,69 է: Նա քաջաճանոթ է բանագիտության նվաճումներին, բովանդակալից զեկուցումներով մասնակցում է հանրապետական ու միջազգային բանահյուսական ու հեքիաթագիտական գիտաժողովներին:

Դոց. Ն. Վարդանյանը տպագրել է «Հայոց իրապատում հեքիաթը. ժան-րային-տիպաբանական քննություն» (2009) մենագրությունը, համահեղինակ է «Հայ ժողովրդական և գրական հեքիաթի արդի հիմնախնդիրները» (2015) կոլեկտիվ մենագրության (հայերենով և անգլերենով), գիտական պարբերականներում հրատարակել է գիտական 35 հոդված և 17 թեզիս: Վերջին 5 տարիների հրապարակումներից 9-ը տպագրվել են ԲՈԿ-ի ցանկի պարբերականներում:

Դոց Ն. Վարդանյանը բարեխիղճ ու բանիմաց, պատրաստակամ մասնագետ է և կարող է ղեկավարել ասպիրանտների և հայցորդների թեկնածուական ատենախոսությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ - Նկատի ունենալով, որ ԵՊՀ-ում և հանրապետության այլ բուհերում, ԱՊՀ-ում զգացվում է հայ ժողովրդի բանահյուսության մասնագետների սուր կարիք, դիմել ռեկտորատին և ԲՈԿ-ին՝ դոց. Նվարդ Վարդանյանին տալու բանահյուսության մասնագիտությամբ ասպիրանտ և հայցորդ ղեկավարելու իրավունք:

ԼՍԵՑԻՆ.- Հայ նորագույն գրականության ամբիոնի վարիչ, բան. գիտ. թեկն., դոց. Ս. Գրիգորյանի «Վահագն Դավթյանի պոեմները» մենագրությունը տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Բան. գիտ. դոկտ., պրոֆ. Պրոֆ. Ա. Ավագյանը, Վ. Գաբրիելյանը, Ժ. Քալանթարյանը, բան. գիտ. թեկն., դոց. դոց. Ա. Ջրբաշյանը, Ռ. Էլոյանը:

Նշվեց, որ աշխատանքը նվիրված է Վ. Դավթյանի պոեմների ժանրային առանձնահատկությունների և պոետիկայի քննությանը: Այն գրված է գիտատեսական բարձր մակարդակով և բավարարում է մենագրությանը ներկայացվող պահանջները:

Որպես մենագրություն՝ այն կհետաքրքրի նորագույն շրջանի հայ գրականության մասնագետներին և ուսանողներին:

Ներկայացվեցին նաև պրոֆ. Վ. Գաբրիելյանի, դոց. Ա. Ղազարյանի և բան. գիտ. թեկնածու Ա. Ավանեսյանի կարծիքները:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ս. Գրիգորյանի «Վահագն Դավթյանի պոեմները» մենագրությունը երաշխավորել տպագրության:

Լ Ս Ե Ց Ի Ն – Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի հայցորդ Արա Սմբատի Զարգարյանի թեմայի և ղեկավարի հաստատման հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն - Պրոֆ. պրոֆ. Ժ. Քալանթարյանը, Ալ. Մակարյանը, դոց. դոց.Ա. Զրբաշյանը, Ռ. Էլոյանը: Նրանք նշեցին, որ Եղ. Չարենցի պոեզիայում նախատիպերի քննությունը քիչ ուսումնասիրված խնդիր է, միաժամանակ նախատիպի գեղարվեստականացման հարցը տեսական կարևորագույն հիմնահարց է, որը ներկայացնում է գիտական լուրջ հետաքրքրություն:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Հաստատել գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի հայցորդ Արա Սմբատի Զարգարյանի <<Նախատիպի գեղարվեստականացման սկզբունքները Եղ. Չարենցի պոեզիայում>> գիտական թեման Ժ.01.04.գրականության տեսություն մասնագիտությամբ: Միաժամանակ որոշեցին ատենախոսության գիտական ղեկավար նշանակել դոց. Ա. Բեքմեզյանին:

ԼՍԵՑԻՆ.- Հայ նորագույն գրականության ամբիոնի առաջին տարվա առկա ուսուցման ասպիրանտ **Սալախի Աղիայի Քյուրքճեանի** հաշվետվությունը և ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Պրոֆ. պրոֆ. Վ. Գաբրիելյանը, Ա. Ավագյանը, դոց. Ս. Գրիգորյանը, Ա. Զրբաշյանը:

Սալախի Քյուրքճեանի թեկնածուական ատենախոսության թեման է՝ «Պոդոս Սնապյան. գրականագետը, գրողը» (ղեկավար՝ բ.գ.դ., պրոֆ. Վ. Գաբրիելյան):

Նա ուսումնասիրել է Պ. Սնապյանի գրական-քննադատական ողջ ժառանգությունը և ծանոթացել նրա գործերին վերաբերող կարծիքներին և տեսակետներին:

Պատրաստվում է հրատարակելու հոդված, որում քննվում են Մնասյանի “Mais Alors” պատմվածքի որոշ խնդիրներ:


ՈՐՈՇԵՑԻՆ. – Սալայի **Քյուրքճեանին** ատեստավորել:

Վերջում գիտխորհրդի նախագահը շնորհավորեց պրոֆ. Ալ. Մակարյանին, շնորհակալություն հայտնեց նիստի բոլոր մասնակիցներին, և նիստը համարվեց փակված:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ



ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ